ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Հայկական վիրաբուժության դասական եվ հայ բժշկության նահապետ

Հուլիսի 1-ին ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի ծննդյան 102-րդ տարեդարձն է

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մխիթար Հերացու շքանշանի առաջին ասպետ, ԽՍՀՄ ԱՆ Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի (այժմ՝ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ) հիմնադիր:

Հայ բժշկագիտության մեջ մեծ կշիռ ունեն Ս. Ավդալբեկյանի աշխատանքները՝ նվիրված սրտի էլեկտրամեխանիկական ակտիվությանը, սրտի լայնակի բլոկադայով հիվանդների էլեկտրաստիմուլյացիայի ուսումնասիրմանը, թոքերի կոմպենսատոր պրոցեսների ձևաբանությանը, արյան մակարդման և ֆիբրինոլիտիկ համակարգերին և այլն:

Նա ԽՍՀՄ–ում առաջինն է կիրառել թոքերի սուր թարախակույտերի խոռոչների տրանսպարիետալ կաթետերավորումը:

ԱԱԻ

Առողջապահության
ԼՐԱՏՈՒ

Ս.Ավդալբեկյանը հրաշալի գիտակցել է բժշկի մշտապես կատարելագործման անհրաժեշտությունը: Եվ պատահական չէ, որ նա Երևանի բժշկական ինստիտուտին կից բժիշկների կատարելագործման ֆակուլտետի ստեղծման նախաձեռնողներից մեկն էր և ֆակուլտետի դեկանը: Իսկ 1963 թվականից ղեկավարել է Բժիշկների կատարելագործման նորաստեղծ ինստիտուտը:

Հայաստանի Հանրապետության, ժողովրդի առջև ունեցած վաստակի համար ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտը կրում է հիմնադիր ռեկտոր ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի պատվավոր անունը: